**Ամանորյա, Սուրբ Ծննդյան բարեմաղթանքներ, օրհնանքներ**

Ձեր տուն մտնի հազար բարի,
Հաճար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը խորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք՝ լիքը տնով:

Ձեր կարասնին լեցվին գինով, ավետիս,
Ձեր խորոզնին կանչեն ձենով, ավետիս,
Ձեր ճուկն ու թաս երթան ու գան, ավետիս,
Ծառ խընկենի, արմավենի, ավետիս,
Ձեր մանչերուն Աստված օրհնե, ավետիս:

Ահա եկավ Նոր տարի,
Հետը բերավ նոր բարի,
Մանր տղոց ուրախ օր,
Բարի զավակ հորն ու մոր:

Բարով եկար Նոր տարի,
Տուր մեզի ցորեն, գարի,
Այգուն, բաղջին պտուղ տուր,
Հիվանդություն թող չըլնի,
Ապրիք շատ ու շատ տարի:

Հինը գնաց, նորը կուգա,
Հինը ուրախ ճանապարհեք,
Նորն էլ լիքը բարիք կուտա:

Առատ տարի, բերքը՝ բարի:

Դուռ, լուսամուտ բացեք,
Ինչ ուզում եք խնդրեցեք:
Ահա եկավ Նոր տարի,
Հետը բերավ նոր բարի:

Շնորհավոր Նոր տարի,
Ձեր տունը շեն ըլնի,
Բարով նոր հագնեք,
Միշտ ուրախ լինեք:

Հացը բոլ ըլնի,
Աչքը կուշտ ըլնի,
Ձեզ էլ փայ ըլնի,
Մեզ էլ փայ ըլնի:

Բարին վեր գա, ձեզ հետ նստի,
Բարով թող գա ձեր Նոր տարի,
Մուրազներդ թող կատարի:

**Բարեմաղթանքներ**

Շնորհավոր ձեր Նոր տարին, առատ, ուրախ, անկորուստ տարի լինի, բարով հասնեք մեկ էլ էս օրվան, առողջ, երջանիկ լինեք:

Շնորհավոր Նոր տարի, ամէն տարի ուրախ, բարով, խերով շատ տարիներ էս օրս հասնիք:

Ուրախության տարի լինի, ցամաք աչքով, ուրախ սրտով ամեն տարի էս օրվան հասնիք:

Ուրախությամբ տարեմուտ ենք անում, ուրախությամբ էլ սուրբ Հարությանը արժանանանք, լի ու առատ լինի, Աստված մահին թանգություն տա, հացին՝ էժանություն:

Տունը շեն ըլնի, բարաքաթ ըլնի,
Միշտ ջոմարդ լինեք,
Մեզ էլ միշտ հիշեք:
Շնորհավոր Նոր տարի:

**Օրհնանքներ**

Հացիկ, ջրիկ – կյանք երջանիկ:

Օրհնվեք, ձեր օջախը շեն մնա, ձեր մինը հազար դառնա:

Շեն մնաք, ծլեք, ծաղկեք, զորանաք:

Օրհնյալ լինեք, յոթը որդով սեղան նստեք:

Հիվանդություն թող չլնի, ապրեք շատ ու շատ տարի:

Ոտքերդ քարին չդիպչի, երկար արև ձեզ:

Չոլը գնաք՝ կանաչ դառնա, Աստծո աջը ձեր գլխից անպակաս լինի:

Ջրի նման երկար կյանք ունենաք, ուրախ օրով ծերանաք:

Օրհնյալ է Աստծո օրհնանքը, Աստծո խաչը միշտ ձեր վրա լինի:

Բախտավոր ապրեք, ձեր տան ծուխը վառ մնա:

Երկար արև լինեք, մազներդ չծռվի:

Հող ցանեք, ոսկի հնձեք:
Օրհնվի ձեր յոթը պորտը:

Ծլեք, ծաղկեք, ծիր - ծիրանի դառնաք:

Ձեր կերածդ հացը հալալ լինի, հացով մնաք:

Տաշտներդ լի հաց լինի, դռներդ միշտ բաց լինի:

Ծլեք, ծաղկեք, զորանաք, ձեր կերածդ հացը հալալ լինի: